

Ռեուվեն Էնոխ (Ռուբեն Էնուքաշվիլի)

Արիելի (Բարայել) համալսարանական կենտրոնի պրոֆեսոր

ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ՝ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՑԻ ՀՐԵԱՆԵՐԻ ԽՈՍՔԱՅԻՆ ՀՆՉԵՐԱՆԳԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Վրացի հրեաների խոսքի ուսումնասիրմանը համապատասխան ուշադրություն չէր դարձվում՝ չի ուսումնասիրված վրաց հրեաների խոսքն՝ ըստ նրանց բնակեցման վայրերի, չի պարզաձ, թե ինչ ընդհանուր նշաններ ունի այս խոսքը ողջ Վրաստանում, չի ուսումնասիրված վրացի հրեաների կողմից կատարված Սուրբ գրքերի բանավոր թարգմանությունների մեծ մասը, դեռ չունենք պատասխան կարևորագույն հարցին՝ վրաց հրեաների խոսքը այսպես կոչված հրեական լեզվական շարքի՞ն է պատկանում (ինչպիսին է , օրինակ՝ իդիշը), թե՞ այն վրացերենի հերթական բարբառներից մեկն է ...

Տվյալ հոդվածում ուշադրությունը կենտրոնացված է Արևմտյան Վրաստանի հրեաների խոսքի հնչերանգային առանձնահատկությունների վրա, ինչն էականորեն տարբերվում է տեղի բնակիչների հնչերանգից:

Վրացի հրեաների խոսքի հնչերանգային առանձնահատկությունները պայմանավորում են բազմապիսի ելևէջումները, որոնք, էականորեն միայն նրան են բնորոշ, սկսած շեշտի յուրահատուկ կիրառությունից, և նաև հնչյունաբանական հատկանիշները, առանձնապես ձայնավորների երկարեցումը: Կքննարկենք ինչպես այն հնչերանգային առանձնահատկությունները, որոնք կապված են ինչպես տրամաբանական շեշտի, այնպես էլ նախադասության տեսակների հետ՝ ըստ երանգի, թե կառուցվածքի:

Ներածություն՝ Վրացի հրեաների խոսքի հետազոտման ժամանակակից վիճակը.

Հրեաները Վրաստանում ապրում են երկու հազար տարուց ավել ժամանակի ընթացքում¹ Դարերի ընթացքում հրեաներն

այստեղ աստիճանաբար կորցրել են իրենց լեզուն՝ իվրիթը [= հրեերենը] (թե արամեերենը), աստիճանաբար վրացերենը դարձել է նրանց խոսակցական լեզուն, իսկ աղոթելու համար, ինչպես բոլոր հրեական համայնքները սփյուռքում, կրկին հրեերենն էին օգտագործում: Վ.Մոսկովիչի և Գ.Բեն-Օրենի ճշմարտացի ծանոթությամբ. «Վրացի հրեաները վրացերենն օգտագործում են որպես իրենց շփման լեզու, սակայն նրանց խոսակցական լեզվում պահպանված են յուրահատկություններ, որոնք առավելապես դրսևորվում են միմյանց հետ զրուցելիս» (Վ.Մոսկովիչ և Գ.Բեն-Օրե, Բնութագրիչներ, էջ 103):

¹ Այս տարեթվի մասին մանրամասն դատողություն անելը հեռանում է առաջադրված հոդվածի հետազոտման թեմայից, նշում ենք միայն մի քանի հիմնական տեսակետ՝ նրանցից մեկի համաձայն, հրեաները Վրաստան են եկել մոտավորապես 720 թվականին մինչև մեր դարաշրջանը (Քարթլիի կյանքը, 4, էջ. 53), մեկ այլ տեսակետի համաձայն՝ մ.թ.ա 586 թվականից առաջ (Քարթլիի կյանքը, 1) և, վերջում, որոշ հետազոտողներ կարծում են, որ սա տեղի է ունեցել մ.թ.ա երկրորդ դարում, մասնավորապես, 169-166 թվականներին (Մելիքիշվիլի, Պատմություն, էջ 452-453):

Ցավոք, չնայած նրա հետազոտման անչափ մեծ նշանակությանը, նախ՝ իր վրաց լեզվի պատմության և բարբառագիտության հիմնական հարցերը պարզելու համար, վրացի հրեաների խոսքի ուսումնասիրմանը չէր դարձվում համապատասխան ուշադրություն: Իհարկե, ճիշտ չի լինի ասել, որ այս տեսակետից բոլորովին ոչինչ չի արվել՝ հրատարակվել են մի շարք աշխատություններ, որոնք վերաբերում են այս խոսքի տարբեր հարցերին, ինչպես Վրաստանում, այնպես էլ Իսրայելում², սակայն դեռ շատ բան կա հետազոտելու և պարզելու (այսօր մի շարք հարցերի ուսումնասիրումը գործնականում անհնար է, քանի որ հրեաների բնակեցման վայրերը Վրաստանում դատարկված են, իսկ նրանց խոսքը համարյա համահարթված)՝ չի ուսումնասիրված վրացի հրեաների խոսքն ըստ նրանց բնակեցման վայրերի, չի պարզված, թե ինչ ընդհանուր հատկանիշներ ունի այս խոսքը (կամ ունի արդյոք այսպիսի հատկանիշներ) ողջ Վրաստանում³, չի ուսումնասիրված վրացի հրեաների կողմից կատարված Սուրբ գրքերի բանավոր թարգմանությունների մեծ մասը, դեռ չունենք պատասխան կարևորագույն հարցին՝ վրաց հրեաների խոսքը այսպես կոչված հրեական լեզվական շարքին է պատկանում (ինչպիսին է, իդիշը՝

եվրոպական հրեաների լեզուն, լադինոն՝ Իսպանիայից վտարված հրեաների լեզուն, արաբական հրեերենը և այլն), թե այն վրացերենի հերթական բարբառներից մեկն է կամ էլ տեղական վրացական բարբառների խոսվածք և այլն:

Վրաստանում հրեաները տարբեր դարաշրջանում տարբեր տարածաշրջաններում էին բնակվում (կամավոր թե հարկադրական գաղթերը բավականին հաճախակի էին) և բնական է, որ նրանց խոսքը⁴ ենթարկվում էր այս բարբառների ազդեցությանը: Սակայն, մյուս կողմից՝ վրացի հրեաների խոսքում բացահայտորեն դրսևորվում է տեղի բնակիչների խոսքից տարբերակվելու ձգտման միտում⁵:

Տվյալ հոդվածում ուշադրությունը կկենտրոնացնենք **Արևմտյան Վրաստանի հրեաների խոսքի հնչերանգային առանձնահատկությունների վրա**,⁶ ինչն այս խոսքի կարևորագույն «ճանաչման» նշանն է, և այն մի շարք դեպքերում էականորեն տարբերվում է տեղի բնակիչների հնչերանգից: Ավելին, երբ վրացի հրեաների խոսքն ուզում էին հեզանքով

² Բաբալիկաշվիլի, Հրեերենը, Նույնի, Արտասանությունը, Բեն Օրեն և Մոսկովիչ, Հրեերեն-արամեերեն, Բեն Օրեն և Մոսկովիչ, Արգո, Բեն Օրեն և Մոսկովիչ, Բնութագրիչներ, Գագուլաշվիլի, Սեփական, Մ.Դանիելաշվիլիի բրոշյուրը Մ.Մամիսթվալաշվիլիի մասին, Դումբաձե, Բառապաշարային, Էնուպաշվիլի, Բնութագրիչներ, Էնոխ՝ Տենդենցիա, Հին, Իվրիթի ազդեցությունը, Քուբախի, Բնութագրիչներ 2, Հրեերեն բառեր, Սեփական, Թավաիլի, Դիտարկումներ, Կրիխելի՝ Հրեաներ, Լերներ, Քարթլիի դարձը, Պատմական, Է. Մամիսթվալաշվիլի, Վրացի, Գ.Օերեթելի, Սաչխերե, Կ.Օերեթելի՝ Վրաց-հրեական, Տերմին և այլն:

³ Ինչպես նշել են բազմիցս, այս երկու կետերի վերաբերյալ ցուցումներ է տվել ինձ՝ դեռևս երկրորդ կուրսի ուսանողիս, ակադեմիկոս Վառլամ Թոփուրիան, որն ինձ հանձնարարեց ուսումնասիրել վրացի հրեաների խոսքը և դրա համար ընդարձակ նախագիծ ուներ պատրաստ: Սակայն, ցավոք, մեծ գիտնականը նույն թվականին վախճանվեց, և նախագիծը մնաց չիրականացված:

⁴ Վրացի հրեաների խոսքի արտահայտման համար Վրաստանում նույնիսկ հատուկ տերմին էր ստեղծվել՝ **ցօ-ցրջլօ**, հրեերեն արտահայտող հենց հրեերեն բառից (իսկ իրենց՝ հրեաներին երբեմն դիվեր էին կոչում), **ջրօջլօ** (ուրիա բառից, որը հրեերենն արտահայտող տերմին էր դեռ հին վրացերենից, սակայն երբեմն հեզնող նրբերանգ ուներ); Իրենց՝ վրացի հրեաների մեջ կար տերմին **“հցցեջրջլօ”**, Բսկ Քուբախիսի վրացի հրեաները հատուկ տերմին ունեին ներմուծած՝ **“Նջօտթրջրօ”** («Չվիթ փողոց» էին անվանում վրացի հրեաների թաղամասը, որը աղոթարանների շուրջն էր գտնվում, իսկ հիմնականում այս թաղամասի «զլխավոր» փողոցը, որը խորհրդային շրջանում Շահումյանի փողոց էր կոչվում), որով արտահայտում էին վրացի հրեաների խոսքը:

⁵ Տես՝ այս մասին, Էնոխ, Քուբախիսի, էջ 180.

⁶ Ուշագրավ է նշել, որ այսպես կոչված «հրեաների լեզուների» կարևորագույն առանձնահատկություն է համարվում տեղի բնակչության խոսքից հնչերանգային տարբերությունը: Տես՝ այս հարցի վերաբերյալ, օր.՝ Ջեկոբս, Իդիշ, էջ 109:

նմանակել, հենց այս յուրահատկությունն էին ընդգծում: ⁷

Վրացի հրեաների խոսքի հնչերանգային յուրահատկությունը պայմանավորում են բազմապիսի ելևէջումները, որոնք, էականորեն միայն նրանց են բնորոշ, սկսած շեշտի յուրահատուկ կիրառությունից, և նաև հնչյունաբանական հատկանիշները, առանձնապես ձայնավորների երկարացումը, ինչը նորից և նորից շեշտի հետ է կապված, և համեմատաբար հազվադեպ նաև ձայնավորների նեղացումը: Կքննարկենք ինչպես այն հնչերանգային առանձնահատկությունները, որոնք կապված են ինչպես տրամաբանական շեշտի, այնպես էլ նախադասության տեսակներն՝ ըստ երանգի, թե կառուցվածքի:

ա. Պատմողական նախադասություն

Նախ և առաջ, ուշադրությունը կկենտրոնացնենք հետևյալ երևույթի վրա՝ շեշտն ընկնում է պարզ պատմողական նախադասության բայ-ստորոգյալի վրա, ինչի հետևանքով այս ձայնավորը երկարում և սրանով շեշտակիր ձայնավորը նախադասության մեջ դառնում է կենտրոնականը: Օրինակ՝ Բանձայում 1966 թ. գրված նյութի մեջ ունենք այսպիսի նախադասություն. «*კუდაშ ხუთი კაპევიკო ღმრის პატარა ხაბუზრაკებო*»: Հնչերանգի տեսակետից նախադասության «սիրտն» է *ღმრის* բառը, որի ձայնավորը երկարել է և դարձել շեշտակիր: Արտահայտության վերջում հնչերանգն իջնող է, վերջին բառի նախավերջին ձայնավորը կարծես ավելի թույլ է արտաբերվում, իսկ ամենավերջին ձայնավորը լավ է լսվում, սակայն մի փոքր կարճանում է:

[Իհարկե անհամեմատ ավելի լավ կլիներ, որ նախադասությունը, եթե ոչ տպագիր, ապա մագնիստոֆոնով գոնե լիներ գրանցված,

սակայն, ցավոք դրա հնարավորություն այն շրջանում (1966 թ.) դաշտային պայմաններում դեռևս գոյություն չուներ: Հատուկ պետք է նշվի ևս մեկ պահ՝ վրացի հրեաների խոսքը, եթե կարելի է այսպես ասել, համայնքի ներսում կիրառության համար է, բավական է այս պայմանը խախտվի, այսինքն՝ զրույցին ուրիշն էլ մասնակցի, և ամեն ինչ փոխվում է՝ վրացի հրեան համարյա չի դրսևորում այս խոսքի առանձնահատկությունները և հոյակապ գրական վրացերենով կամ տեղական բարբառով է շարունակում զրույցել (զույցե պատահաբար միջարկի, միամիտ բերանից թոցնի որևէ ձևեր հրեական խոսքից): Հենց նույնն է տեղի ունենում նրա խոսքը ձայնագրելու դեպքում՝ ձայնագրության պրոցեսը նրա համար ներքին խոսքի շրջանակներից դուրս գալ է, և այդ պատճառով էլ նա այնպես է խոսում տվյալ դեպքում, ինչպես «արտաքին զրույցի» ժամանակ: Դրա հետևանքով տեխնիկական միջոցների կիրառությամբ ձայնագրումը հնարավոր է ոչ էլ պիտանի լինի վրացի հրեաների խոսքի հետազոտման համար: Մա, իհարկե, նաև ընդհանուր հիմնախնդիր է, սակայն վրացի հրեաների հետ կապված առանձնապես սուր է դրսևորվում:

Տվյալ հոդվածի մեջ ընդգրկված նյութի հիմնական մասը, ինչպես նշվեց, գրի ենք առել Բանձայում 1966 թվականին, նաև Քութախիում 1976 և 1986 թվականներին և Թբիլիսիում 1988 թվականին Արևմտյան Վրաստանից եկածներից: Բացի Բանձայից, մնացած բոլոր գրառումներն իրականացվեցին մագնիստոֆոնի միջոցով և բազմաթիվ դժվարությունների հանդիպեցինք՝ անհրաժեշտ էր հարցվողներին անչափ կենդանի զրույցի մեջ ընդգրկել, որ մոռանալին մագնիստոֆոնը և հաջողվեր ազատ ձայնագրել, սակայն եթե մագնիստոֆոնը հայտնվում էր նրանց տեսադաշտում, անմիջապես փոխվում էր խոսելաձևը: Մրան ավելանում էր ևս մեկ

⁷ Հրեաների շրջանում շատ տարածված մի քանի բառի և արտահայտության հետ՝ «*დებენაცვლე*», «*თორის მადლობა*» և այլն:

հանգամանք՝ մենք այնպիսի պայմաններում էինք ապրում Խորհրդային Միությունում, որ շարքային մարդկանց շրջանում, որոնք երբեմն ոչ էլ լսել էին խոսքի ազատության մասին, որոշակի վախ գոյություն ուներ ցանկացած ձայնագրության նկատմամբ, առավել ևս հրեաների շրջանում: Այդ պատճառով էլ այս գործընթացին ուղեկցում էր հարցվողների մեծ ներքին լարվածություն, ինչն, ինքնըստինքյան, ազդում էր նաև խոսքի յուրահատկությունների և, առանձնապես, հենց հնչերանգի վրա]:

Եվս մեկ օրինակ՝ “Բյոթո Եօժյ՞ ԵՐ ԶՁՁՅՆ ԹՁԶՁ՞Օ”։ Հնչերանգային առումով այս նախադասության «կենտրոնական» բառն է ԶՁՁՅՆ, որի ձայնավորը շեշտակիր է և երկար: Ուշագրավ է ևս երկու հետաքրքիր պահ. 1. Եօժյ՞ բառի վերջին ձայնավորը կարճանում է, քանի որ հնչերանգն իջնող է: 2. Նախադասության վերջին բառի մեջ՝ ԹՁԶՁ՞Օ, առաջին ձայնավորի շեշտը թույլ է, ինչը իջնող հնչերանգի ցուցանիշ է, և վերջին ձայնավորը կարճանում է:

Վերևում բերված օրինակներում բայ-ստորոգյալը միավանկ բառ է: Պատկերը փոխվում է, երբ բայը երկվանկ կամ բազմավանկ բառ է, օրինակ՝ “Բյոթո ԹԹ՞ ԵՐ ԸԵՕԶԾՔՆՆ ԹՁԶՁՕՕ ԵՕՅԶԵ՞”։ Այսպիսի դեպքերում ևս բայը նախադասության կենտրոնական բառն է հնչերանգային տեսակետից, նրա վերջին ձայնավորը շեշտակիր է, սակայն այն չի երկարում, մինևույն ժամանակ կարճանում է ԹԹ՞ բառի ձայնավորը, և նաև կարճանում է նախադասության վերջին բառի վերջին ձայնավորը: Այս ամենը մեզ տալիս է վրացի հրեաների խոսքին բնորոշ յուրահատուկ հնչերանգ (գուցե ավելի լավ է սա կոչել յուրահատուկ ելևէջում):

Մի շարք դեպքերում հնչերանգային առումով նախադասության կենտրոնական բառը ոչ թե բայն է, այլ այն բառը, որի վրա ընկնում է տրամաբանական շեշտը:

Օրինակ՝ “ԹՁԵՅՅՕՕ ԹՁՁՅՅՅ ԵՕ ՎՅԹՁԵՕ՞”։ Տվյալ նախադասության մեջ կենտրոնական բառը հնչերանգային տեսակետից ԹՁՁՅՅՅ բառն է, ինչի պատճառով նրա ձայնավորը երկար է և շեշտակիր: Վերջին բառի մեջ հնչերանգն իջնող է, և այդ պատճառով նրա վերջին ձայնավոր օ՞-ն թուլանում է:

Եթե մինևույն բառը նախադասության մեջ երկու անգամ է օգտագործված տրամաբանական շեշտով, նրանցից երկուսում էլ ձայնավորը երկար է և շեշտակիր՝ “Ե ԵՁՁՅՅ ԿՅՕ ԵՐՕ ԸԵ ԵՆՅԶ ԵՁՁՅՅ”:

Այսպիսի օրինակների կողքին ունենք նաև այնպիսի դեպքեր, երբ կրկնված բառերից մեկի վրա է տրամաբանական շեշտը, և այդ պատճառով հենց նրա ձայնավորն է երկարում, ինչպես հետևյալ նախադասության մեջ. “Թյ ԹՕՆԸԵ, ԹՁՁ ԲյՅՅՅՅՅ”:

Պետք է նշել, որ դադարին նախորդող բառի վերջին ձայնավորը շեշտակիր է և երկարում է բարդ ստորադասական նախադասության մեջ. “Եյյյ ԵՕ ՅՆԸԵ ԲԵԶԵՅԵՕՕՕ ԸՅԸԵԹՕՕՕ ԵՕՅԶԵ՞, ԹՕԿԼԵ ԵՅԵՅԵ ԿՅԵՐԹԵ ԵՕԼՕ՞”։ Այս դեպքում ձայնի ելևէջման փոփոխությունը կողմնորոշված է նրան, որ ունկնդրի ուշադրությունն ուղղի նախադասության երկրորդ մասին: Նման երևույթի հանդիպում ենք նաև գուրիական բարբառում (Ջորբենաձե), սակայն վրացի հրեաների խոսքում շեշտն ավելի հզոր է:

Նույն նպատակով, ունկնդրի հետաքրքրության հզորացման համար, երբեմն վերջին բառի վերջին ձայնավորը նույնպիսի փոփոխություն է կրում. “Թյյյմ-ԵՕԸԵ, ԸՅԸԵՄՅՆՕՆԵՆ ՎՅԶՕԿՅԵՆՕ, ԵՕԸԵՕՕ ՅՕԿԵՅՅՅՅՅՅ”:

Երբեմն երկարում են և շեշտակիր դառնում բարդ նախադասության երկու մասերի վերջին բառերի վերջին ձայնավորները. “ԵՕԸԵՅՅՅՅՅՅ ԹՕՕՎՅՅԵ ԵՕՆՕՕՕ, ՕԸԸԵՅՅՅՅՅ ԶՅՅՕՎՅՅՅ ԹՁՁ”:

կլիներ համեմատել, թե ինչպես էին արտասանում նույն նախադասությունը իմերեթական բարբառի տարբեր խոսվածքների ներկայացուցիչները: Մա ապագայի գործ է (ակամա անմիջապես հիշում ես մարդու հայտնի արտահայտությունը. “Յե՛նժօճօնջե՛լ Ե՛նժ Յ՛եճե՛”)? Թեպետ համոզված չենք, որ վերջին ձայնավորն այստեղ կրկնապատկվում է, ինչպես այդ ունենք Արևմտյան Վրաստանի հրեաների խոսքում):

Եվս մեկ օրինակ, այս անգամ նախադասության վերջին բառը բազմավանկ է. “Ի՛յմ Ե՛ոճյ՛ն Ն՛աճլլե՛նձ” նրա (վերջին բառի) վերջին ձայնավորը շեշտակիր է և երկարում է, փաստորեն երկու յ ձայնավոր է լսվում: հետաքրքիր հնչերանգային փոփոխությունների են ենթարկվում նաև ձայնավորները՝ սկզբից հնչերանգը դառնում է իջնող, հասնում ամենից ցածր ձայնասահմանի երկրորդ ձայնավորի մոտ, այնուհետև սկսում է բարձրանալ, որն առավելագույնի է հասնում վերջին ձայնավորի մոտ և արդեն առաջացնում նկարագրված փոփոխությունը:

Հետքաքրքիր է, որ վերջին ձայնավորի երկարեցում և նրա շեշտադրում է տեղի ունենում նաև այն ժամանակ, երբ հարցական նախադասության վերջին բառը ոչ թե բայ է, այլ ուրիշ խոսքի մաս. “Օ՛մօճօճօն Յ՛ոճօճօճօն օ՛ յ՛աճլլե՛նձ?” Ինչպես տեսնում ենք, վերջին բառի վերջին ձայնավորը նույն փոփոխություններին է ենթարկվում՝ երկարում է այնքանով, որ էականում երկու օ ձայնավոր ենք ստանում, և այն դառնում է շեշտակիր: Եվս մեկ հնչերանգային առանձնահատկություն է պետք նշել այս նախադասության համաձայն. բայի՝ այս դեպքում այն երկրորդ տեղում գտնվում նախադասության մեջ, վերջին ձայնավորը թեթև շեշտ է ստանում և նրանից հետո կա նաև փոքրիկ դադար: Այնուհետև հնչերանգը դառնում է բարձրացող և առավելագույնի է հասնում նախադասության վերջում:

Կարելի է ասել, որ երբեմն բայ-ստորոգյալի վերջին ձայնավորը երկարում է և դառնում է շեշտակիր, անկախ հարցական նախադասության մեջ նրա դիրքից: Օրինակ, քննարկենք նախադասություն, որը հետաքրքիր է մի շարք տեսանկյունից. “Գե՛նա՛նջլլե՛նձ Յ՛եճյ Օ՛նօ?” (նախադասությունը ձայնագրված է Քութախիում 1886 թ. – մեզ հարց տվեց մի հրեա, երբ խոսքը վերաբերում էր հեռուստատեսային դասախոսություններին, և նա մեր բարեկամով՝ Թամազ Կվաճանտիրաձեով հետաքրքրվեց) բայ-ստորոգյալը սկսում է նախադասությունը և նրա վերջին ձայնավորը հենց այն փոփոխություններն է կրում, որ նշվեցին վերևում՝ երկարում է և դառնում շեշտակիր: [Այս նախադասության մեջ առկա է վրացի հրեաների խոսքի մի քանի հետաքրքիր ձև 1. **գենա՛նջլլե՛նձ** – կրավորականի յուրահատուկ ձև (ի միջի այլոց, վրացի հրեաների խոսքի մեջ ունենք նաև այս բայի **օ**- նախածանցավոր ձև. “**օնա՛նջլլե՛նձ** մաճ-նաօրօ յ՛Յյե՛տ-Ե՛նօլլօ {= ‘յօճլլեճնրօճ Յ՛յեճ-յլլօ յ՛ալլօ’} Ն՛աճլլե՛նձ”]; 2. **օ՛ն** անձնական դերանվան հին (թե այսօրվա համար՝ ընդարձակված) ձևը **օնօ**; 3. իմերեթական բարբառի որոշ ենթաբարբառներին բնորոշ երկրորդ դեմքի դերանվան ձևը՝ **Յ՛եճյ**: Վրացի հրեաների խոսքի մեջ երկրորդ դեմքի հոգնակիի դերանունն էլ է ընդունում յ ձայնավոր՝ **օյճյեճյ**]:

Տեխնիկապես կոժվարանար հատուկ նշաններով ցույց տալը, սակայն նկարագրելով կարելի է պատկերացնել այս նախադասության հնչերանգը՝ երկրորդ բառը (Յ՛եճյ) իջնող հնչերանգով է արտասանվում, նրանից հետո կարծես մի փոքր դադար է և այնուհետև կրկին սկսվում է հնչերանգը բարձրանալ, սակայն այնպես, որ վերջին բառի վերջին ձայնավորը, ճիշտ է, դառնում է շեշտակիր, սակայն այն չի երկարում: ¹¹

¹¹ Հարցական նախադասության այսպիսի հնչերանգը մինչև օրս պահպանվել է Բարայել ժամանած վրացի

օրինակ կար նաև Քուրախիում գրի առած նյութում. “օ՞րձան ճոճան, արօջեղի ճոճան **ՆՇՄԵՐՕ**.”]

2. **ՁԵՆ** բայի ներկայի ձևում կորչում է երրորդ ենթակայական դեմքի –**Ն** նշանը, ինչին հաջորդում է նաև նախորդող **Յ** բաղաձայնի կորուստ, և սա տեղի է ունենում բոլոր դեմքերի ձևերում.¹⁴ “Մեն եւ ար **ՅՁԵՂ** յերօ յեւ յիմօղօ?” Ներկայացված նախադասության հնչերանգը երկու կողմից է հետաքրքիր. նախ՝ փոխհատուցող երկարեցման դեպք ենք տեսնում՝ **ՅՁԵՂ**, իսկ մյուս կողմից, բարձրացող հնչերանգի ազդեցությամբ նախադասության վերջին բառի վերջին ձայնավորը երկարում է: Այս օրինակի համաձայն, հնարավոր է եզրակացություն անել, որ նման դեպքերում հիմնական հնչերանգային ծանրաբեռնումն անցնում է բային, և շեշտը նրա վրա է ընկնում, թեպետ սա չի խանգարում նախադասության վերջին ձայնավորի երկարելուն:

3. Առանձնապես հետաքրքիր է **հակառակ փոխհատուցման երևույթը**. բանն այն է, որ, երբ **ՁԵՆ** բային նախորդում է **ար** մասնիկը **լրիվ ձևով**, այդ դեպքում, չնայած դեմքի –**Ն** նշանի (և նախորդող բաղաձայնի) կորստին՝ բայական ձայնավորը չի երկարում. “**ար** **ՁԵՂ** մե **Մեն** օջո.” Սակայն այն ժամանակ, երբ մասնիկը կարճ **ար** ձևով է ներկայացված, անմիջապես առաջանում է փոխհատուցող երկարեցումը. “**ար** **ՁԵՂ** ճո **ար** մոյճե.”

Ի միջի այլոց, նույնն է տեղի ունենում հարցական մակբայի **ՆՁԵ/ՆՁԵ** **ձևերի դեպքում**. ա) ընդլայնված ձևի հետ բայի ձայնավորը չի ենթարկվում փոխհատուցման. “**ՆՁԵ** **ՁԵՂ** մա **Մեն**.” բ) սակայն չընդլայնված ձևի հետ օգտագործած բայի մեջ արդեն տեղի է ունենում փոխհատուցող երկարեցում. **ՆՁԵ** **ՅՁԵՂ** մաջօս օջո.”

¹⁴ Այս դեպքում չենք դատում այն հարցի մասին, թե արդյոք կա փոխատեղում և դեմքի նշաններն արդյոք իրենց ուղղակի գործառնություն են օգտագործված:

Կարծես կարելի էր շատ պարզ կերպով բացատրել այս երևույթը, որ, քանի որ ընդարձակ ձևերի դեպքում ինքնըստինքյան երկու **Յ** ձայնավոր ենք ստանում, արդեն կարիք չկար փոխհատուցող երկարեցման, սակայն պարզվում է, որ, ինչպես երևում է, սա **Յ** ձայնավորի պատճառով չի տեղի ունենում և հակառակ փոխհատուցման երևույթն ընդհանրապես նկատվում է ընդարձակ ձևեր պարունակող նախադասություններում: Քննարկենք Բանձայում գրի առած համառոտ երկխոսություն.

“– **ՕՆ** մոյճեցօղեց **ՁԵՂ**!” – **ՕՆ** յեր մոյճեցօղեց **Մեն**!” Բացահայտ է, որ, երբ **ՕՆ** դերանունը ընդարձակ չէ, նախադասության վերջին ձայնավորը շեշտակիր է և երկար, իսկ երբ **ՕՆ** դերանունը լրիվ ձևով է ներկայացված, այս երևույթը (վերջին ձայնավորի երկարեցում) արդեն այլևս տեղի չի ունենում:

4. Երբեմն միևնույն նախադասության մեջ ի հայտ են գալիս և փոխհատուցող երկարեցման երևույթ, և հակադիր փոխհատուցում. “**ար**օջերօ **ՆՁԵՐՕ** **ար** **ՁԵՂ** **ՅՁԵՂ** **ՆՁԵՐՕ**!”¹⁵

Փոքրիկ ամփոփում. Ինչպես տեսանք, վրացի հրեաների խոսքին բնորոշ են մի շարք հնչերանգային յուրահատկություններ, որոնք ի հայտ են գալիս տարբեր տիպի նախադասություններում, հիմնականում ձայնավորների երկարեցման միջոցով:

Առանձնահատուկ ուշադրություն են գրավում փոխհատուցող երկարեցման և հակադիր փոխհատուցման երևույթները:

¹⁵ Փաստորեն այս նախադասությունը կարիք ունի վրացերեն «թարգմանության» – “**ՅՁԵՂ** **ար** **Մեն** **ՅՁԵՂ** **ՅՁԵՂ** **ՅՁԵՂ**” (ենթադրվում է ընտանիքում):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բաբալիկաշվիլի, Հրեերեն = Нисан Бабаликашвили, Еврейские эпиграфические памятники в Грузии /XVIII-XIX вв./, Автореферат на соискание ученой степени кандидата филологических наук, Тбилисский государственный университет, 1971
- Բաբալիկաշվիլի, Արտաբերություն = Նիսան Բաբալիկաշվիլի, «Վրացի հրեաների իվրիթային արտաբերությունը», Լեշոնենու, 1980, Աշուն, էջ 66-70 (իվրիթով)
- Բեն-Օրեն և Մոսկովիչ, Հրեերեն-արամեերենը, = Wolf Moskovich & Gershon Ben-Oren, "The Hebrew-Aramaic and Georgian Components in the Spoken Language of Georgian Jews", *Proceedings of the Eighth World Congress of Jewish Studies*, Division D, Jerusalem 1982 pp. 19-24
- Բեն-Օրեն և Մոսկովիչ, Արգո = Գերշոն Բեն-Օրեն և Վոլֆ Մոսկովիչ, «Վրացի հրեաների առևտրականների Արգոն արևելյան այլ երկրների հրեա առևտրականների Արգոյի հետ համեմատությամբ», *Յոմաճոցձօտ*, *Մեսրոպ*, 2, (1986), էջ 49-56
- Բեն-Օրեն և Մոսկովիչ, Բնութագրիչներ = Գերշոն Բեն-Օրեն և Վոլֆ Մոսկովիչ, «Վրացի հրեաների խոսքի առանձնահատկությունները», *Ֆե՛Միմ*, 31 (1987), էջ 95-119
- Բեն-Օրեն, Առանձնահատկություններ = Գերշոն Բեն-Օրեն, Վրացի հրեաների խոսքի սպեցիֆիկ առանձնահատկությունները, դոկտորական աշխատություն, Երուսաղեմի հրեական համալսարան, 1993 թ.
- Գագուլաշվիլի, Հատուկ = Իյա Գագուլաշվիլի, *Հատուկ անուններ. հրեական անունների փոքրիկ բառարան*, Քութախի, 1993
- Դանիելաշվիլի, Մորդեխ = Մոսե Դանիելաշվիլի, *Մորդեխ Մամիսթվալիշվիլի*, Թբիլիսի, 1996
- Դումբաձե, Բառարան = Կոտե Դումբաձե, «Բառապաշարային հրեիզմները վրացական քաղաքային ժարգոնում», *Ջավանմարդ*, 2, 1979 թ., էջ. 28-37
- Էնոխ, Դիտարկումներ = Ռեուվեն Էնոխ, «*Դիտարկումներ Բերեշիթի համաձայն*», Երուսաղեմի հրեական համալսարանի հրատարակչություն, 2009 (իվրիթով)
- Էնոխ, Թավսիլ = Ռեուվեն Էնոխ, *Թավսիլ, Թորի ավանդական թարգմանություն վրացի հրեաների կողմից: Ա.Բերեշիթ*, Երուսաղեմի հրեական համալսարանի հրատարակչություն, 2008
- Էնոխ, Բնութագրիչներ 2 = Reuven Enoch, "Peculiarities of the Georgian Jews' Speech, 2", International Scientific Conference "Tbilisi – Jerusalem 2", Academy of Sciences of Georgia, Tbilisi 1998, *Theses Summaries*, pp. 65-66
- Էնոխ, Բառարան = Ռեուվեն Էնոխ, «Հին վրացերենի բառապաշարային միավորները «Թավսիլիում»», *Իվ.Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի Վրաց լեզվի ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու*, I, Թբիլիսի, 2010, էջ 34-49
- Էնոխ, Հատուկ = Ռեուվեն Էնոխ, «Հրեական հատուկ անունները վրացի հրեաների խոսքում» *Թեգիսների ժողովածու «Եվ սրանք են անուններ»*, հրեական անունների հետազոտմանը նվիրված յոթերորդ միջազգային գիտաժողով, Երուսաղեմի հրեական համալսարան, 2005 թ. 31.7-1.8, էջ. 6 (տպագրվում է ժողովածու մեջ «Եվ սրանք են անուններ», որը մոտակա ժամանակամիջոցում լույս կտեսնի)

- Էնոխ, Քուրախի = Ռեուվեն Էնոխ, «Վրացի հրեաների խոսքի մի քանի սպեցիֆիկ առանձնահատկություն Բանձա-Քուրախիի տարածաշրջանի հրեաների օրինակով», *Հրեական ժառանգություն*, №2, 2005, էջ 153-182
- Էնոխ, Հին = Ռեուվեն Էնոխ, «Հին վրացերենի տարրերը «Թավսիլիում I» Անունների հոլովման հետ կապված հարցեր», *Վրացագետ*, Թբիլիսիի պետական համալսարան, №14, 2007, աշուն
- Էնուքաշվիլի, Բնութագրիչներ = Ռուբեն Էնուքաշվիլի (=Ռեուվեն Էնոխ), «Հ.վրացի հրեաների խոսքի մի քանի սպեցիֆիկ առանձնահատկություններ», *Վրաստանի հրեաները և Վրաստան-Պաղեստին հարաբերությունները, Միջազգային սիմպոզիումի թեզիսներ*, Երուսաղեմ, Արևելքի հրեական համայնքների հետազոտման Բենվիլի անվան ինստիտուտ, 11-12.12.1990
- Կվաճաձե, Ժամանակակից = Լեո Կվաճաձե, *Ժամանակակից վրաց լեզվի շարահյուսություն*, Երրորդ լրացված հրատարակություն, Թբիլիսի, 1988
- Կրիխելի, Հրեաներ = Արոն Կրիխելի, «Վրացի հրեաներն իրենց հարևանների շրջանում», ժողովածուի մեջ *Հաթֆուցա*, Արևելյան Եվրոպա, Երուսաղեմ, 1976, էջ 121-125
- Կրիխելի, Պատմական = Арон Крихели, «Исторический обзор пребывания иногородных (русских и европейских) евреев на Кавказе», *Труды Историко-этнографического музея евреев Грузии* 3 (1945), стр. 135-166
- Լերներ, Քարթլիի դարձը = «*Քարթլիի դարձը*» երկը, պատմա-լեզվաբանական հետազոտություն, վրացերենից թարգմանել է, ներածությունը և ծանոթությունները կցել Կոնստանտին Լերները, Երուսաղեմ, 2003 թ.
- Է.Մամիսթվալաշվիլի, Վրացի = Էլյար Մամիսթվալաշվիլի, Վրացի հրեաների պատմությունը, «Մեցնիերեբա», Թբ., 1995
- Մելիքիշվիլի, Պատմություն = *Վրաստանի պատմության ակնարկներ*, I, Գ.Մելիքիշվիլիի խմբագրմամբ, Թբ., 1970
- Քարթլիի կյանքը, 1 = *Քարթլիի կյանքը*, Տեքստը որոշված բոլոր ձեռագրերի համաձայն Ս.Ղաուխիշվիլիի կողմից, I, Թբ., 1955
- Քարթլիի կյանքը, 4 = *Բատոնիշվիլի Վախուշտի, Վրաստանի թագավորության նկարագիրը*: Տեքստը որոշված բոլոր ձեռագրերի համաձայն Ս.Ղաուխիշվիլիի կողմից, I, Թբ., 1973
- Կ.Մերեթելի, Մաչխերե = Մաչխերեի հրեաների խոսքը, Ձեռագիր աշխատություն
- Կ.Մերեթելի, Վրաց-հրեական = Կոնստանտին Մերեթելի, «Վրաց-հրեական փոխհարաբերության համար», *Սաքարթվելոս ռեսպուբլիկա*, 8-9.9.1998, էջ. 2
- Կ.Մերեթելի, Տերմին = Կոնստանտին Մերեթելի, «Վրացերենում «իվրիթ» տերմինի օգտագործման պատճառով «Օտար տերմին մայրենի վրացերենի փոխարեն», *Մենորա*, նոյեմբեր, 1998
- Ջեկոբս, Իդիշ = N. G. Jacobs, *Yiddish: A linguistic Introduction*, Cambridge, 2005
- Ջորբենաձե, Բարբառագիտություն, 2 = *Բեսարիոն Ջորբենաձե, Վրացական բարբառագիտություն*, 2, Թբիլիսի, 1998

Reuven Enoch

Ariel University Center of Samaria,
The Department of Israel Heritage

GEORGIAN DIALECTOLOGY ISSUES – NOTES TO THE GEORGIAN JEWS INTONATION OF SPEECH

ABSTRACT

There was not paid adequate attention to learning of Georgian Jews speech: It has not been studied the Georgian Jews speaking according to their resettlement areas yet, it is not clear what general signs have this speech through Georgia. It has not been studied the most of the oral translations of sacred books performed by the Georgian Jews. We don't have answer on the major question - does the speech of the Georgian-Jews belongs to the Jews set (such as Yiddish,) or it is only the ordinary dialect of Georgian ...

This article highlights the speech intonation features of the West Georgian Jews, that significantly differs from the intonation of local residents.

Georgian Jews speech intonation peculiarities are conditioned by a variety of modulation, which is essentially typical only for it, this is using a specific stress-marks, as well as phonetic features, particularly length of vowel sounds. In the article will be discussed the peculiarities of intonation, which are related to the logical stress-marks, as well as types of the sentences according to the content and structure.